Վերապատրաստող կազմակերպություն՝ ՀՀ ԿԳՄՍՆ

«Մարտունու Տ.Աբրահամյանի անվան ավագ դպրոց»ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հարցադրման մեթոդով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բեյբության Հասմիկ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Դեղձանիկ Չոմոյան

ԴՊՐՈՑ՝ Ձոլաքարի Ալ.Վարդանյանի անվան 2 միջնակարգ դպրոց

Մարտունի-2022

Բովանդակություն

1.Ներածություն.....3.

2.Գրական ակնարկ.....8.

3.Փորձարարական հետազոտություն.....12.

3.1.Խմբի նկարագիրը.....22.

3.2.Փորձարարական դաս-1.....23.

3.3.Փորձարարական դաս-2.....31.

4.Վերլուծություն.....41.

5.Գրականության
ցանկ.....44.

6.Հավելված.....45.

Դասապլան-1.....45.

Դասպլան-2.....52.

1.Ներածություն

Գրականությունն ազգի հոգին է և գրողներն էդ հոգու ծնունդներն ու արտահայտիչները: Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝դպրոցի բովանդակությունը: *Հովհ. Թումանյան*

Հայ գրականություն անցել է ազգային գրականության զարգացման բոլոր փուլերը և մարդկությանը տվել է անփոխարինելի գոհարներ: Սեփական գրերը հայ գրականությանը հաղորդել են նաև ուրույն զարգացման հնարավորություն և անկրկնելիություն: Գրերի գյուտից հետո գրականությունը հարստացել է բանահյուսական մեծ ժառանգությամբ, դարերի ընթացքում հանդես են եկել գրական նոր ինքատիպ ոճեր և ձևեր:

V դարում Հայաստանում ծավալվեց մշակութային շարժում, որը հիմք դրեց ազգային գրականության հետագա զարգացմանը: Ժամանակաշրջանը համարվում է հայ գրականության «ոսկե դարը» : Գրերի գյուտից հետո գրականության թռիչքային զարգացումը հիմված էր դարերի ընթացքում կուտակված փորձի, ավանդույթների վրա:

Գրականությունը, եթե հաշվի չառնենք ժողովրդական բանահյուսական նյութը, իր բնույթով անձնական ստեղծագործության արդյունք է,սակայն անկախ այն բանից,թե ինչ գաղափար ու նվիրում է շոշափել,իր ընդհանրության մեջ նրա համար հարցերի հարցը եղել ու մնացել է հայրենիքի ճակատագիրը,այլ խոսքով ասած՝հայրենիքը հայ գրականության գլխավոր հերոսն է:Ամեն բանից վեր և ամեն բանից առաջ Հայրենիքն ու նրա ճակատագիրը. Սա հայ գրականության ամենաբնորոշ առանձնահատկությունն է,որը նրան զատում է աշխարհի շատ ժողովուրդների գրականությունից:Ա՛յն հայրենիքը, որն այնքան տարուբերվել է կյանքի ու մահվան միջև, բզկտվել տառապանքի բավիղներում, ա՛յն հայրենիքը,որը որպես մշտական ուղեկից ունեցել է սովը, թշվառությունը, թալանն ու բռնությունը:Բայց միշտ կամ գրեթե միշտ հայ գրողը հնչեցրել է ապրելու և հարատևելու իր հավատը,որն այնքան համահունչ է եղել իր ժողովրդի կյանքի ընթացքին՝ միշտ դեպի վեր, դեպի Ազատն Մասիս, այսինքն՝ Արարատն ի վեր՝ մեր ազգային գոյության ու ոգու մարմնացման այդ բարձրագույն խորհրդանիշ: Մեր պատմությունն

ընթացել է տառապանքի ու հերոսացման բավիղներով: Հայ կյանքի ընթացքը երբեք ներդաշնակ չի եղել: Անտառներից ու ձորերից, անապատներից ու տափաստաններից դարեր շարունակ ներխուժել են պարսիկներն ու բյուզանդացիները, արաբներն ու սելջուկները, չինգիզխաններն ու թամերլանները:Հայ կյանքը բզկտվել է այդ հորդանների ավերներից:Եվ հայ գրողը ստիպված է եղել գրելու նաև բողոքի ու նզովքի խոսքեր:

Սակայն մեր գրականությունը ի վերջո քրիստոնյա ժողովրդի գրականություն է, հետևաբար՝ լցված աստվածաշնչյան պատգամներով:Բարու և ազնիվի,նվիրման ու գեղեցիկի տարփողումը այդ գրականության հատկանշական կողմերից է, որը նրան հաղորդել է ոչ միայն մարդասիրական, այլև խաղաղասիրական բնույթ:Ասենք նաև ,որ քրիստոնեության ընդունումը լոկ հավատքի հարց չի եղել հայության համար:Այն նաև առաջադիմական մտքի,ավելի բարձր բարոյական չափանիշների, մշակութային առաջընթացի խնդիր է հետամտել:Ահա թե ինչու նվաճման, այլ ժողովուրդներին ստրկացնելու գաղափարները հայ թագավորը ուրիշի ժողովուրդներին տիրելու մասին չէ,որ մտածել է, այլ իր հայրենի եզերքի կարոտով է մորմոքվել:

Ո՞ տայր ինձ զծուխն ծխանի

Եւ զառաւօտն նավասարդի…

Բռնության, հարստության տենչանքները հայ գրականության բովանդակությունը չեն կազմել:Մինչդեռ ազատաբաղձության գաղափարները հնչել են մշտապես ու իմաստավորվել են ինքնուրույն պետականության, առաջադիմության, արվեստների ու մշակույթների զարգացման առաջադրանքներով:

Հայ գրականությունը նաև վավերաթուղթ է, գեղարվեստական անփոխարինելի վավերաթուղթ:Մենք նաև նրանով ենք վերականգնում մեր անցյալի բազում իրողություններ, խորանում հայ մարդու մտածողության, գործունեության ու վարքի շատ հատկանիշների մեջ, հաղորդակից դառնում գալիքին:Հայ գրականությունը ճանաչողական արժեք ունի, այդ թվում՝ տարբեր ժողովուրդների միջև բարեկամական

կապերի հաստատման առումով:Գրականությունը մշակութային արժեք է, ժողովրդի յուրատեսակ անձնագիր,գալիքին ուղղված պատգամախոս, հայ մտքի ու նպատակների տարածող,և մեր գրական գոհարների թարգմանությունները տարբեր լեզուներով նպաստում են օտարների կողմից հայ մարդու ու հայ երկրի, նրա հոգևոր ու ազգային արժեքների ճանաչմանն ու ընկալմանը:

Բայց շատ քիչ է թարգմանվում մեր դասական գրականությունը, իսկ մեզանում այն հայերեն գրեթե չի տպագրվում: Մեր օրերում էլ գրականությունը մի որոշ մասով մնում հայ կյանքի ու ժողովրդական բաղձանքների արտահայտիչը:Մեր օրերում էլ այդ գրականությունը և նրան տրված արժևորուները էական նշանակություն ունեն ոչ միայն ժամանակակահցներիս, այլև գալիք նոր սերունդների համար:Ուրեմն գրականությունը նաև մեր ազգային կյանքի ու հայ մարդու ձևավորողը, ոգեշնչողն ու դաստիարակիչն է, հայ մարդու բարոյական , հոգևոր-մշակութային նկարագրի կերտողը:

Գեղարվեստական գրականությունը ազգային արժեք է մանավանդ հայերիս համար,շտեմարան մտքի ու ոգեղեն թռիչքների:Այն գեղագիտական իդեալների, հայ մարդու պատկերավոր մտածողության և զգացմունքների դրսևորումների ու սերունդների տևական երթի խթան է:Հայ դասական գրականությունը իր մեջ հավերժական պայքարի ոգի է կրում:Եվ եթե մենք պատկերավոր ասում ենք, որ կյանքի բոլոր ճակատներում,որպես հավերժի զինվորներ, կռվել են նաև մեսրոպյան երեսունվեց տառերը,ապա կարող ենք ասել,որ այդ զորագնդի հրամանատրներից մեկն էլ հայ գրականությունն է եղել:Ուրեմն մեր գրականությունը այն անփոխարինելի միջոցն է,նյութը մտքի է այլափոխում,միտքը՝ ապրումի, ապրումը՝արվեստի, այլ խոսքով՝ ոգեղենացնում է նյութը, իրականացնում ու գեղակերտում ազգին հուզող լուսե երազ:

Եվ ընդհանրապես գրականությունն օգնում է մեզ տեսնել մարդու ներքին գեղեցկությունը, սովորել հասկանալ և գնահատել այն:

Գրականությունը ոգու և անհատականության դաստիարակության հզոր աղբյուր է: Գեղարվեստական պատկերների բացահայտման միջոցով գրականությունը մեզ տալիս է

բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի հասկացություններ: Ոչ մի պատճառաբանություն, առավել համոզիչ, չի կարող այնպիսի ազդեցություն ունենալ մարդու մտքի վրա, որքան ճշմարտացիորեն գծված պատկերը: Եվ սա է գրականության ուժն ու նշանակությունը: Անդրադառնալով ժամանակակից աշխարհում գրականության կարևորությանը, մենք դիմում ենք Նոբելյան դասախոսությանը ՝ Ա.Ի.Սոլժենիցինը, որը հանձնվեց մրցանակաբաշխությանը, մրցանակին արժանանալուց մի քանի տարի անց: Իր խոսքում նա նշում է գրականության կարևոր գործառույթները.« 1. Մարդուն հնարավորություն է տալիս յուրացնել ուրիշի կյանքի փորձը որպես սեփականը. 2. Սերնդեսերունդ փոխանցել, այսինքն ՝լինել ազգի կենդանի հիշողություն»: Ա.Սոլժենիցինի ասածներից և գրվածներից շատերն այժմ ընկալվում են որպես մարգարեություն: Նրա հայտարարությունները ժամանակակից աշխարհում գրական բառի նշանակության վերաբերյալ, որոնք հնչել են ավելի քան 30 տարի առաջ, չեն կորցրել իրենց արդիականությունը:

Նա նշում է համաշխարհային գրականության այնպիսի մի առանձնահատկություն, ինչպիսին է միասնությունը. որոշ եզրերի խտացրած փորձը փոխանցել ուրիշներին, որպեսզի մենք դադարենք կրկնապատկվել և մթագնել մեր աչքերում, կշեռքի բաժանումները կհամատեղվեն, և որոշ ժողովուրդներ ճիշտ և հակիրճ կիմանան մյուսների իսկական պատմությունը ՝ նույն ճանաչման ուժով և ցավ, ասես իրենք են դա զգացել, և այդպիսով նրանք կպաշտպանվեին ուշացած դաժան սխալներից: Եվ միևնույն ժամանակ, մենք ինքներս, թերևս, կկարողանանք մեր մեջ զարգացնել աշխարհի տեսլականը. Աչքի կենտրոնում, ինչպես յուրաքանչյուր մարդ, մոտիկ տեսնելով, աչքի անկյուններով մենք կսկսենք կլանել այն, ինչ տեղի է ունենում մնացած աշխարհում: Եվ մենք կհամեմատենք և կդիտարկենք համաշխարհային համամասնությունները: Նա գրողին անվանում է ազգային լեզվի խոսնակ ՝ազգի հիմնական կապը: Նրա կարծիքով, գրականությունը կարող է օգնել աշխարհին իր թեժ ժամին:

Գրականությունը նպաստում է նոր սերունդների դաստիարակությանը և զարգացմանը, օգնում է բացել մարդկության կատարելագործման նոր հորիզոններ ՝ թողնելով իր

սեփական նկատելի հետքը հաջորդ սերունդների համար: Ժամանակակից գրականությունից պահանջվում է նոր հայացք առօրյա բաներին: Անկախ նրանից, թե ինչպես է մարդը փոխվում, և անկախ նրանից, թե ինչպես է ժամանակը նայում կյանքին, հավերժական արժեքները մնում են անփոփոխ: Նա ապրում է, վայելում է կյանքը, քանի դեռ ոտքերի տակ ամուր հող է զգում: Բայց հենց որ այս հողը ցնցվի, մարդը բացում է հայտնության էջերը: Եվ, իհարկե, ճշմարտության որոնման լավագույն ուղեցույցը միշտ եղել և մնում է մշակութային ժառանգության հսկայական շերտ ` կրելով բազմաթիվ սերունդների փորձը:

Իսկ ո՞վ է այսօրվա գրականության հերոսը, ո՞վ է այսօրվա գրականության գեղագիտական իդեալի կրողը՝ աշխատող, արարող մարդը՞, ազնի՞վ մարդը, գիտնականը՞,մտավորականը՞,զինվորը՞.... Ցավոք,ո՛չ: Մեծ մարդկանց, մեծ հոգիների,հերոս մարդկանց պատկերավորումները ժամանակակից գրականության էջերում գնալով նվազում են:Վերանում են նաև բարու ու չարի սահմանները:Գրականության ժամանակակից միտումները ուղղված են դեպի աշխարհի ավելի գլոբալացված հարցերը, քան տեղայի ու ազգային հրատապ խնդիրները: Առաջ եկավ հասարակության պահանջարկին հարմարվելու հրամայականը, որը վերափոխեց գրականության՝ որպես դաստիարակող, կրթող և զարգացող մեխանիզմի նշանակությունը. գրականությունը հարմարվեց շուկային, զանգվածների հետաքրքրությանը:

2010-ականներին համացանցի և սոցիալական կայքերի զարգացման և հրապարակայնացմանը զուգահեռ՝ հայ գրականությունը ամբողջությամբ կորցրեց իր ազգային դեմքը և զարգացման ուղենիշը. առաջնային դարձավ ոչ թե ստեղծագործության մշակութային արժեքը, այլ՝ նրա հեղինակի հանրաճանաչելիության մակարդակը:

Խնդիրները բազմազան են և մտահոգիչ...

Այստեղ է, որ գրականության ուսուցիչը ունի շատ անելիքներ սերունդների դաստիարակման գործում: Գրականության ուսուցիչն է սվորողների մեջ ձևավորում

արժեհամակարգ: Ի վերջո, գրականության ուսուցիչն է դասին ծանոթացնում մեծ դասականների ստեղծագործություններին, օգնում է ավելի լավ հասկանալ այն իմաստը, որը գրողները և բանաստեղծները ցանկանում էին փոխանցել իրենց սերունդներին իրենց ստեղծագործությունների միջոցով: Ինչ -որ առումով գրականության ուսուցիչը առաջին հոգեթերապևտն է, որին մարդը հանդիպում է իր կյանքում: Ի վերջո, նա է, ով դպրոցականներին ներկայացնում է մարդկանց աշխարհը, և նրանց միջև հարաբերությունների ամբողջ բազմազանությունը:

2.Գրական ակնարկ

Հանրակրթական դպրոցի և ուսուցչի առջև այսօր բազմաթիվ խնդիրներ են դրված: Անհրաժեշտ է փնտրել և գտնել ուղիներ, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ դարձնելուն: Անհրաժեշտ է ընտրել այնպիսի ռազմավարություն, որոնք կմոտիվացնեն աշակերտին, ուսուցանվող նյութը կդարձնեն հետաքրքիր,

հասկանալի և մտապահվող: Ես ենթադրում եմ , որ այդպիսի ռազմավարությունից մեկը հարցերի միջոցով սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումն է: Հետազոտության այս հատվածում փորձ կարվի գիտամանկավարժական գրականություն ուսումնասիրել, որոնք վերաբերվում են հարցադրումների մեթոդին և արժեհամակարգի ձևավորմանը: Ուսումնասիրել եմ , Ջեոֆ Փեթթի «Դասավանդումն այսօր» /Գլուխ 14/, Հարցադրումների մեթոդի առավելությունները», Իննա Փերեմուզյանի «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում » հետազոտական աշխատանքը,Ասյա Ղուկասյանի «Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը» հոդվածը , Լարիսա Բաբերցյանի «Հարցադրման մեթոդ» հոդվածը:Ուսումնասիրված աշխատանքներից կատարել եմ ինձ համար հետաքրքիր և ուսումնառության գործընթացի արդյունքներին նպաստող եզրահանգումներ,առանձնացրել եմ մտքեր ու հատվածներ,որոնք կօգնեն ,որ իմ հետազոտական աշխատանքը լինի ավելի նպատակային:

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը, մասնավորապես, անգնահատելի է լեզվի և գրականության դերը: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է

հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»

[6, 65]: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում,Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը.դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ,այսինքն՝նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ,ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Անշուշտ այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն:Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում. երեխաները լսում են,թե որքան լավ բան է ազնվությունը,արդարությունը,տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն,սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումն իրենց ուսուցիչների, ծնողների կամ շրջապատողների կողմից:Բնական է, որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում:Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը:Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական,պատմական հերոսների օրինակով,նաև ուսուցչի վարքագծով:Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել

դասագրքերի նյութերին,ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը:Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն,այսինքն՝աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու,դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին,գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը :

Այս հետազոտական աշխատանքում ես կփորձեմ ներկայացնել հարցադրումների մեթոդով սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը:

Մենք գիտենք, որ մեթոդ նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ:Ուստի մեր ընտրած ճանապարհը պետք է լինի ուսուցանող, նպաստի կրթության բովանդակության յուրացմանը:Ուսուցման գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն:Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ:Չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից բխող մեթոդների ճիշտ ընտրությունը: Այսօր մեթոդները բազմաթիվ ու բազմազան են, սակայն դրանց ընտրությունը չի կարող ինքնանպատակ լինել:

Հարցադրումների մեթոդի առավելությունները և թերությունները

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը հիմք է հանդիսանում կրթության որակի բարելավման: Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը: Քրիստին Չինը իր աշխատություններից մեկում նշում է, որ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը: Ըստ նրա՝ դա բացահայտումների փուլ է, որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ ուսուցիչը [5, 823]: Հարցեր տալու և հարցերին

պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է գրավում: Պարզվել է, որ վերջին 15 տարիների ընթացքում ստացված տեղեկությունների համաձայն՝ ուսուցիչները մեծամասամբ տվել են սխալ հարցեր՝ կենտրոնանալով ոչ թե ուսումնառությունն առաջ մղող, այլ սովորողի տիրապետած որոշակի տեղեկույթը վերհանող հարցադրումների վրա: Հոդվածի նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար: Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը [4, 47]:

Մանկավարժական գրականության մեջ հարցերը դասկարգվում են հետևյալ կերպ.

1. բաց
2. փակ
3. հուշող
4. ենթատեքստով
5. հետադարձ

6. ուղղորդող

Բաց հարցեր

Բաց հարցերը նպատակահարմար են անմիջական հաղորդակցություն սկսելու համար:Այս տիպի հարցերը հնարավորություն են տալիս ազատ պատասխանելու և սովորաբար սկսվում են«ինչ՞»,«ինչպե՞ս»հարցերով:Այդպիսի հարցերը չեն ենթադրում միանշանակ պատասխան:

Փակ հարցեր

Փակ անվանում են այն հարցերը,որոնք պահանջում են միանշանակ պատասխան, որն արտահայտվում է մեկ բառով՝ պարզապես «այո» կամ «ոչ»:Փակ հարցերը նպատակահարմար է օգտագործել տեղեկատվության ստուգման կամ պատասխանի ընտրության հնարավորությունը սահմանափակելու համար:

Այս տեսակի հարցերը խորհուրդ չի տրվում հայախ օգտագործել, որովհետև վերջիններս սահմանափակում են սովորողների մասնակցության աստիյանը և հարցաքննության բնույթ ունեն:Դրանք նաև որոշ չափով սահմանափակում են սովորողի ստեղծագործոկոն մոտեցումը:

Հուշող հարցեր

Հուշող հարցերը, ինչպես երևում է անվանումից, այն հարցերն են, որոնք նպատակ ունեն աշակերտին հանգեցնելու այն պատասխանին, որն ակնկալում է ուսուցիչը:Այս հարցերի օգտագործումը կարող է նաև արդարացված չլինել, գանի որ խանգարում են աշակերտի ազատ մտածողությանը և զրկում են սեփական պատասխանն ու կարծիքը ունենալու հնարավորությունից, սակայն այս դեպքում աշակերտը ավելի պաշտպանված է զգում: Հուշող հարցերի օրինակներ են՝ «Դուք չե՞ք գտնում,որ այս թեման կարող է ձեզ համար օգտակար լինել»,«Մի՞իթե դուք կարծում եք, որ այս մոտեցումը ճիշտ չէ»:

Ենթատեքստով հարցեր

Այս տեսակի հարցերն օգտագործվում են աշակերտի լարվածությունը թուլացնելու և ակնկալվող պատասխանին հասնելու նպատակով, չնայած ինչպես հուշող հարցերը,

ենթատեքստ ունեղող հարցերը ևս խոչընդոտում են աշակերտների ազատ պատասխանելու հնարավորությունը:

Հետադարձ կապն ապահովող հարցեր

Հետադարձ հարցերն օգտագործվում են, որպեսզի ճշտվի նյութի ընկալումը, և աշակերտների զրույցի մեջ ընդգրկված լինելը, նրանց պատասխանները զարգացնելու, կամ հետագա քննարկումը խրախուսելու և շարունակելու համար:

Ուղղորդող հարցեր

Ուղղորդող հարցերն օգնում են աշակերտին կենտրոնանալու միջոցով ուշադրություն սևեռել դիտարկվող նյութի այս կամ այն մասի վրա: Մասնավորապես այն նպատակահարմար է օգտագործել նոր թեմային անցնելուց առաջ անցած նյութը ամփոփելու համար: Կարևոր է նաև, թե աշակերտերին ուղղորդելու նպատակով հարցերը երբ և որ պահին են տրվում:/Բ.Լ./

Հոդվածի նպատակն է ներկայացնել հարցադրումների մի քանի ռազմավարություններ, որոնք կարող են նպաստել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածության մեծացմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

1.Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավարությունություն:

Սա այն մոտեցումն է, երբ ուսուցիչը հարցն ուղղում է ամբողջ դասարանին: Ամենայն հավանականությամբ, սա ամենատարածված մեթոդներից մեկն է, որի շրջանակում տրվող հարցերը հիմնականում նպատակ ունեն պարզելու նյութի յուրացման մակարդակը կամ պարզել, թե որքանով են աշակերտներն ընկալել ուսուցանվող նյութը: Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ այս հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, մյուսները պարզապես լինում են լսողի դերում: Ավելին, հաստատվեց նաև Գալլի այն տեսակետը, որ

որքան ավելի շատ հարցադրումներ են հնչում, այնքան ավելի պակաս աշակերտներ են մասնակցում դասին: Ճիշտ հարցադրման դեպքում այն կարող է հիմնովին փոխել նախնական պատկերը: Լավ հարցերը նպատակաուղղված են, հստակ են, հակիրճ են, բնական են, մտածելու տեղիք են տալիս, սահմանափակ են, համապատասխանեցվում են դասարանի մակարդակին:Հարցադրման տեխնիկան շատ կարևոր է, որի ճիշտ կիրառումը ոգևորում է դասարանի բոլոր աշակերտներին և նրանց մղում մտածելու, հնարավորություն է տալիս աշակերտներին ստանալու դրական հետադարձ կապ՝ ցույց տալով ուսումնառության մեջ նրանց հաջողությունները, հարկավոր է մտածելու ժամանակ տալ, խրախուսել պատասխանները, սկզբում պարզ հարցեր տալ: Ծաղրելու փոխարեն՝ տրամաբանական մտածողության միջոցով ուսուցիչը պետք է հանգեցնի ճիշտ պատասխանին: Ժամանակի ընթացքում աշակերտը ոչ թե դասագրքից է գտնում հարցերի պատասխանը, այլ սկսում է մտածել և տրամաբանված պատասխաններ է տալիս, այդ ժամանակ հասկանում ես, որ նպատակիդ հասել ես:

2.Հարցական բառերի ռազմավարություն

Այս մեթոդը կիրառվում է, երբ աշակերտներն արդեն ծանոթ են թեմային: Առաջարկվում է աղյուսակ կազմել, որի ձախ կողմում պետք է գրել հարցական բառերի մի ամբողջ շարք, իսկ աջ կողմում՝ թեմային առնչվող հասկացություններ: Այնուհետև օգտագործելով երկու աղյուսակների գրառումները՝ կազմել հնարավորինս շատ հարցեր, քննարկել առաջարկված հարցերից 3-4 հարց, որոնք առավել հետաքրքիր են աշակերտների համար:

3.Պատասխանում են անվանակոչվածները

Այս ռազմավարության շրջանակում անվանակոչվում է աշակերտի հստակ անուն, որ պատասխանում է հարցին այն հնչեցնելուց հետո: Սա այն եզակի ռազմավարություններից է, որի կիրառությունն ապահովում է գրեթե բոլոր աշակերտների ներգրավվածությունը: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ դասին մասնակցում են գրեթե բոլոր աշակերտները՝ անկախ իրենց առաջադիմությունից: Յուրաքանչյուրը մասնակցում է իր չափով, և այս պարագայում խրախուսվում է

ցանկացած հաջողություն, անգամ ամենափոքրը: Ավելին, եթե աշակերտի կողմից տրված պատասխանը այն չէ, ինչ ակնկալվում է, ապա ոչ թե պետք է հարցն ուղղել այլ աշակետի, այլ պատասխանող աշակերտին օգնել վերաձևակերպել պատասխանը:

Դասերի ընթացքում անհրաժեշտ է կիրառել մոտեցումներ, որոնք օգնում են «ջերմացնել» այսպես կոչված «սառը անվանակոչման» ռազմավարությունը: Ստորև ներկայացնենք դրանցից հիմնականները.

- նախապես զգուշացրե՛ք աշակերտներին, որ մեծապես խրախուսվում է դասին մասնակցությունը: Յուրաքանչյուր աշակերտին տվե՛ք ձևավորող գնահատական:
- աշակերտներին տվե՛ք ժամանակ, որ նրանք պատրաստեն իրենց հարցերը, ինչպես նաև անդրադարձ կատարեն հետաքրքրող հարցերին:
- պետք է կարողանալ հմտորեն կառավարել ողջ պրոցեսը և աջակցել աշակերտներին, որ նրանցից յուրաքանչուրն իր հնարավորության չափով ներգրավվի դասին:
- օգտագործե՛ք բաց հարցեր և օգնե՛ք աշակերտին հանգել ճիշտ պատասխանի:
- չափազանց կարևոր է հոգեբանական ապահով միջավայրի ստեղծումը:

4.Վեց W-երի ռազմավարություն

Ժամանակակից մանկավարժության մեջ մեծ տարածում է գտել այսպես կոչված «Վեց W-երի» ռազմավարությունը: Գերմաներենում հիմնական 6 հարցերը՝ ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս, սկսվում են նույն՝ W տառով: Թեմայի ավարտից հետո սովորողները զույգերով երկխոսություն են վարում՝ փորձելով պարզել, թե ինչ է տվել իրենց տվյալ թեմայի ուսումնասիրությունը: Ասենք՝ «Ինչո՞ւ սովորեցիր այս թեման», «Ի՞նչ տվեց այն քեզ», «Որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս կարող ես կիրառել ստացած գիտելիքները» և այլն:

Քննարկվել է խնդիր, որի լուծման արդյունքում սովորողները ստացած գիտելիքները կիրառել են անծանոթ իրադրությունում:

5. Պատասխանին սպասելու ժամանակ

Բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունի սպասելու ժամանակը, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, ինչպես նաև հետագա երկխոսության առաջացման վրա: Սպասելու ժամանակը հարցի և աշակերտի պատասխանի միջև ընկած ժամանակահատվածն է կամ ուսուցչի առաջին և երկրորդ հարցերի միջև ընկած ժամանակահատվածը: Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ պետք է փորձի առաջ տանել զրույցը՝ կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին: Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավածությունը բարձրացնելու համար: Անընդհատ պատասխանելով հարցերին աշակերտների փոխարեն, ուսուցիչը անուղղակիորեն «ասում է», որ նորմալ է, որ նրանք չեն պատասխանում հարցերին, քանի որ ուսուցիչը ի վերջո ինքը կպատասխանի: Արդյունքում աշակերտների սովորելու և դասին մասնակցելու գործընթացը մասնակիորեն դադարեցվում է: Իրականացված հետազոտությունների շրջանակում պարզվել է, որ պատասխանին ավելի երկար սպասելով՝ գրանցում են հետևյալ հաջողությունները.

- սովորողների պատասխաններն ընդարձակվում են:
- ամբողջական նախադասություններ և վստահության ավելացում:
- հայեցողական մտածողության դրսևորում:

- ավելանում են սովորողի հարցերը և աշակերտների ակտիվությունը:
- ուսուցիչները վերանայում են սովորողներից ունեցած ակնկալիքները:
- անցում ուսուցչակենտրոն ուսուցումից սովորող-սովորող վարքի դրսևորումներին և ընդլայնում են հարցերի շրջանակը:

Այսպիսով՝ ուսուցչի սպասման ժամանակի ավելացումն ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր է մտածողության բարձր մակարդակներով արդյունավետ հարցերի համար: Սովորողները ևս օգտագործում են սպասման ժամանակն ավելի ամբողջական պատասխաններ ձևակերպելու համար:

6.Հարցերի շղթայի մեթոդ

Լինում են դեպքեր, երբ բարդ հարցերը տեղին չեն՝ առանց նախապես ամրապնդելու գիտելիքային հիմքը: Օրինակ՝ ներածական դասընթացում ավելի պարզ հարցեր են պահանջվում: Ինտեգրատիվ դասընթացների ընթացքում ուսուցիչը արագորեն պետք է անցնի ավելի բարդ հարցերի, ավելի պարզ հարցեր տալուց հետո՝ ուղղված նախնական գիտելիքների պաշար ձևավորելու համար: Հարցերի շղթայի մեթոդը աշակերտներին մակերեսային պատասխաններից տանում է դեպի խորը քննարկումներ: Ավելին, աշակերտների կողմից հարցերին տրված պատասխանները, անկախ այն բանից, թե դրանք որ մակարդակի հարցեր են, վկայում են այն մասին, որ աշակերտները հստակ ըմբռնել են հարցը և գիտեն, թե խոսքը կոնկրետ ինչի մասին է: Հարցադրումը խիստ արդյունավետ կլինի, եթե, հարցերը պլանավորվեն, լինեն տրամաբանական և հաջորդական,ուղղվեն ամբողջ դասարանին, այնպես տրվեն, որ սովորողները մտածելու ժամանակ ունենան, համաչափ բաշխվեն, չկրկնվեն: Ուսուցիչը պետք է պատրաստ լինի ճիշտ մեկնաբանելու սխալ,մասնակի ճիշտ և միանգամայն ճիշտ պատասխանները շրջահայեցորեն արձագանքի յուրաքանչյուր պատասխանի տեսակին: Դասարանային քննարկումները պետք է լինեն ուշագրավ, նպատակաուղղված, անկաշկանդ, ուղղորդված, բաց և ազնիվ: Սովորողներին դասրանային քննրկման պատրաստելիս

պետք է սովորեցնել արտահայտվել, տալ ամբողջական պատասխաններ, համաձայնելիս կամ չհամաձայնելիս լինել քաղաքավարի, չխոսել առանց թույլտվության:

Հետևաբար, ներկայացնում ենք հարցադրումների՝ որպես դասավանդման մեթոդ կիրառելու առավելությունները՝

- ցույց է տալիս թեմայի տրամաբանությունն ու առաջ անցնում՝ խրախուսելով ոչ թե անգիր անելը, այլ հասկանալը
- ապահովում է, որ ուսումնառությունը կառուցողաբար հիմնվի նախկինում ստացած գիտելիքի վրա
- ստեղծում է փոխանցելի գիտելիք
- տալիս է ակնթարթային հետադարձ կապ (թե՛ ուսուցիչներին, թե՛ աշակերտներին) սովորելու գործընթացի վերաբերյալ
- դասի ընթացքը համապատասխանեցնում է աշակերտի տեմպին
- աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է
- աշակերտներին թույլ է տալիս գործնականում կիրառել ձեր հաղորդած և նրանց կողմից վերջերս յուրացված գաղափարներն ու բառապաշարը
- վեր է հանում սխալ գաղափարներն ու ենթադրությունները՝ թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթաց (այսինքն՝ ապահովում է ուսումնառության «ստուգելու և շտկելու» բաղադրիչը
- անհատական հարցադրումների միջոցով ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել այն դժվարությունը, որին միգուցե հանդիպել է «փակուղում հայտնված» աշակերտը
- կարող է կիրառվել աշակերտին կարգապահ դարձնելու համար

- թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառության ընթացքի վերջնարդյունքը
- խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը: Թերություններն այն են, որ հարցադրումների մոտեցումը.
- կարող է ժամանակատար լինել
- դժվարեցնում է խմբում բոլոր աշակերտների ներգրավվածությունը
- հեշտ կիրառվող ձև չէ ուսուցչի համար: /5, Ջ. Փ.Գ. 14/

Ըստ Ֆ. Գրոյսերի (1964)՝ հարցերը պետք է լինեն հասկանալի, բովանդակալից, հակիրճ, բնական ու պարզ լեզվով շարադրված, մտածելու տեղիք տվող և ներգրավող, «փաստային» և «մտածել ստիպող» հարցերի միջև հավասարակշռություն պետք է լինի: Երեխաների մասնակցությունը և ակտիվ ներգրավումն ապահովելու, նրանց մտածողության խթանման և սովորելու հմտությունների զարգացման համար չափազանց կարևոր դեր ունեն առաջադրվող հարցերն ու հարցադրումները: Հարցերը կամ հարցադրումները երեխաների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու, համակարգելու, ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու կարևոր գործոն են: Հարցերը պետք է լինեն՝

- հստակ
- նպատակաուղղված
- հակիրճ
- տեղին
- երեխաների մակարդակին համապատասխան
- տրամաբանական հաջորդականությամբ

- մտածելու տեղիք տվող /Ա. Ղ./

Այսպիսով, չափից շատ հարցերի օգտագործումը կարող է հանգեցնել բացասական արդյունքների և աշակերտների պասսիվության: Դա կարող է հանգեցնել աշակերտներին չմասնակցելու քննարկումներին, այն կարող է առաջացնել վախի և հարցաքննության զգացողություն: Այսպիսով, բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունեցող տեխնիկաներից մեկը սպասելու ժամանակն է, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, և հետագա երկխոսության առաջացման վրա:

Եվ այսպես հարցադրումների մեթոդը ուսուցման հզոր ռազմավարություն է: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունները ուսումնառության մեջ առանցքային դեր ունեն: Ճիշտ և ժամանակին կատարված հարցադրումները շարժում են սովորողի հետաքրքրությունը, խթանում քննադատական մտածողությունը, մղում վերլուծական անդրադարձի, օգնում սովորողներին յուրովի իմաստավորել ուսումնասիրվող գաղափարները, համադրել սովորածը և կատարել ընդհանրացումներ:

3.Փորձարարական հետազոտություն

3.1.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի Ալ.Վարդանյանի անվան համար 2 միջնակարգ դպրոցի 8-րդ և 11-րդ դասարաններում: 8-րդ դասարանում սովորողների մի մասը չի ներգրավվում դասապրոցեսին և՛ աշակերտների թվի շատ լինելու, և՛ թույլ առաջադիմություն ունենալու պատճառով, ինչպես նաև չեն սիրում գրավոր աշխատանքներ կատարել,ավելի շատ կողմնակից են բանավոր պատասխանելուն: իսկ 11-րդ դասարանում ավելանում է նաև ավագ դպրոցի ամենատարածված խնդիրներից մեկը. արդեն մեծ են և անհարմար է դասապրոցեսին մասնակցեն՝ հատկապես գրատախտակի մոտ գալը:Այս և նմատիպ

խնդիրները հաղթահարելու նպատակով որոշեցի երկու դասարաններում անցկացնել փորձարարական դասեր՝ օգտագործելով հարցադրման մեթոդը:8-րդ դասարանում սովորում են 27 աշակերտ՝ 12 տղա և 15 աղջիկ,իսկ 11-րդ դասարանում 25 աշակերտ՝8 տղա և 17 աղջիկ, որոնք ունեն տարբեր առաջադիմություն և տաբեր հմտություններ:11-րդ դասրանը նաև իմ դասղեկան դասարանն է, 5-րդ դասրանից դասավանդում եմ և գիտեմ յուրաքանչյուրի կարողությունների և հնարավորությունների սահմանը,տարիների ընթացքում ինչպիսի ձեռքբերումներ ունեն և ինչ թերացումներ: Տարբեր ժամանակահատվածներում մասնակցել եմ վերապատրաստման դասընթացների, ժամանակ առ ժամանակ ծանոթանում եմ նոր մեթոդների, դասապրոցեսի կազմակերպման նոր ձևերի հետ և ես էլ որոշեցի իմ դասավանդման ընթացքում կատարել նմանատիպ հետազոտական աշքատանք: Անցկացրել եմ 2 հետազոտական դաս, որոնց ընթացքում փորձարկել եմ **Հարցադրումների մեթոդը,** պարզաբանելու համար, թե որքանով նպատակային կլինի այդ մեթոդով աշակերտներին դասապրոցեսին ներգրավելու համար:

Երկու դասարաններում էլ թեման ընտել եմ հայ գրականությունից /ներածական բաժնում արդեն անդրադարձել եմ գրականություն առարկայի նպատակներին ու խնդիրներին/, որովհետև ավելի համահունչ է իմ ընտրած թեմային՝ արժեհամակարգի ձևավորմանը: Փորձարարական դաս կազմակերպել եմ 11-րդ դասարանում՝ ՛՛շրջված դասարան՛՛ մեթոդով,որը բավականին հետաքրքրություն առաջացրեց սովորողների մոտ:Այս անգամ իմ փորձարարական դասը կկազմակերպեմ հարցադրման մեթոդով և այն կիրականացնեմ միջին կարողությունների տեր 6 աշակերտների /յուրաքանչյուր դասրանում/ համար:

3.2. Փորձարարական դաս-1

Մեծ է գրականության դերն աճող սերնդի աշխարհայացքի և մտահորիզոնի ձևավորման, ճանաչողական գիտելիքների հարստացման, բարոյական արժեքների և գեղագիտական դաստիարակության գործում: Այս իմաստով լայն հնարավորություն է ընձեռում Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը: 8-րդ դասարանում դասի թեման է Հովհաննես Թումանյանի ՛՛Թմբկաբերդի առումը պոեմն է/տե՛ս դասապլան -1 էջ՝ 35/:

Այս դասարանում ընտրել եմ 6 աշակերտ՝ միջին /Գեղամը և Կարենը/ և ցածր /Սյուզին, Նվարդը և Նորիկը/կարողություններ ունեցող :

Դասաժամն սկսեցի անդրադարձ նախորդ դասին / «Հովհաննես Թումանյանի կենսագրությունը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը»/ և տնային աշխատանքի ստուգմամբ:Նախորդ դասին հանձնարարել էի գրել ասույթներ,բանաստեղծություններ նվիրված Հովհ. Թումանյանին: Այնուհետև աշակերտներին հանձնարարում եմ 5րոպեի ընթացքում գրել փոքրիկ շարադրություն ներքոհիշյալ թեմաներից որևէ մեկով/ըստ ցանկության/.

1. 1.Ու՞մ եմ համարում կամ ո՞վ է համարվում լավ մարդ և ինչու՞:
2. 2.Ու՞մ եմ հիշում կամ ո՞վ է հիշվում տհաճությամբ և ինչու՞:
3. 3.Ու՞մ եմ հիշում երախտագիտությամբ կամ ո՞վ է հիշվում տարիների ու դարերի ընթացքում:
4. 4.Ումի՞ց եմ օրինակ վերցնում և ինչու՞:
5. 5.Ու՞մ կուզենայի նմանվել և ինչու՞:

Ամբողջ դասարանը սկսում է աշխատել:Ես առաջարկում եմ իմ ընտրած 6-ը աշակերտներին նույնպես ընտրել թեմա, առաջարկում եմ նրանց ցանկության դեպքում այդ թեմաների վերաբերյալ հիշեն ժողովրդական ասացվածքներ,թևավոր խոսքեր: 5 րոպե անց դադարեցնում եմ գրելը և հարցնում կարդալ: Ընթերցումից պարզվում է,որ բոլոր հարցերի ինչուների պատասխանը մեկն է՝գործը,մի դեպքում լավ ,գնահատելի,մյուս դեպքում չար, մերժելի:Իմ ուշադրության կենտրոնում գտնվող աշակերտներից երկուսը հիշեցին ժողովրդական ասացվածքներ.

«Ով աշխատի՝ նա կուտի»:

«Գյուղ կանգնի՝գերան կոտրի»:

« Հաց ըսին հասավ,գործ ըսին փախավ»:

«Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն»:

Բոլորին լսելուց հետո ամբողջ դասրանին հանձնարարում եմ երկու րոպեի ընթացքում,որպեսզի հիշեն առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր գործի մասին:Ահա մի քանի պատասխաներ՝ բարձր առաջադիմաություն ունեցող աշակերտերի.

«Մի՛ գովիր մարդու տեսքը կամ անթիվ գանձերը, այլ գովի՛ր մարդու գործը» Ֆրիկ

«Գործը փառավոր, փառքը թևավոր»: ժողովրդական

«Ամեն մարդու մասին դատում են ըստ նրա գործերի»: Սերվանտես

«Լավ գործը գաղտնիություն չի սիրում»:

Ես էլ կարդում եմ հետևյալ բանաստեղծությունն ու պատմվածքը.

Ո՛չ վշտացիր,ո՛չ թախծիր դու,

Կյանք է, կանցնի, կգնա,

Որպես արձան անցնող մարդու՝

Նրա գործը կմնա:

Դարը կիջնի դարի վրա,

Դարից ուժ կառնի,

Ու դարերի փոշին վրան՝

Պայծառ գործը կհառնի:

«Մի չար մարդ է եղել,որը որքան չարություն, վատություն ու վատ գործեր է արել, այնքան մեխ է խփել ծառի բնին:Այնքան է խփել,որ տեղ չի մնացել:Մի օրն էլ գնացել է

իմաստունի մոտ, պատմել արածը և խորհուրդ հարցրել:Իմաստունը խորհուրդ է տվել գնալ և բարի գործ անել և ամեն բարության հետ մի մեխ հանել:

Մարդը վարվում է այնպես, ինչպես ասել է իմաստունը:Որոշ ժամանակ անց այս մարդը նորից գալիս է իմաստունի մոտ ու ասում,որ բնին այլևս մեխ չկա, բայց տեղ է բացվել:Իմաստունը, որ իսկապես շատ իմաստուն էր, տխրել ու ասել է.

-Մա՛րդ, ես քեզ այդ ամենը ասել էի, ոչ թե տեղ բացելու համար, այլ որ տեսնես ու հասկանաս, թե որքան էլ բարություն անես, չարության հետքերը կմնան»:

Այս ամենից հետո հարցնում եմ աշակերտներին, թե իրենց կարծիքով մեր նոր նյութը ինչի՞ մասին կլինի:Նրանք պատասխանում են՝ կյանքի, լավ գործի, բարության մասին:Ավարտում եմ խթանման փուլը և անցնում իմաստի ընկալման փուլին:

Իմաստի ընկալման փուլը պատասխանում եմ ես իմ առաջ քաշած հետևյալ հարցին, թե ի՞նչն է պոեմը, տեսակները:Այնուհետև ներկայացնում եմ, որ ՛՛Թմկաբերդի առումը՛՛ քնարապատմողական պոեմ է և ի՞նչն է եղել պոեմի սյուժետային հիմքը:

Ասում եմ,որ այս պոեմի նյութը 1901թ. բանաստեղծը լսել է Ախլքալաքում:Պահպանվում է ժողովրդական փոքրիկ ավանդություն,որի բովանդակությունը հետևյալն է.՛՛Թմկաբերդի քրդերը պատմեցին ինձ,թե մի ժամանակ Թմկաբերդում իշխում էր մի հայ իշխան:Պարսից թագավորը եկել, երկար պաշարել է այս բերդը, սակայն չի կարողացել առնել:Իշխանի կինը սիրահարվել պարսից շահի վրա և ծածուկ առել է նարա հաճությունը յուր հետ ամուսնանալու, եթե ինքը սպանե յուր ամուսնուն և բերդը հանձնե շահին:Եվ իբր նա սպանել է ամուսնուն, հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին:Շահն այսպիսով տիրել է բերդին և հարցրել է մատնիչ իշխանուհուն.«Ես եմ գեղեցիկ՞, թե՞ ամուսինդ»:Եվ երբ սա պատասխանում է, թե ամուսինս գեղեցիկ էր, շահը հրամայել է կապել սորան ձիու ագիից և քարշ տալ մինչև մեռնելը՝ասելով.«Եթե ամուսինդ գեղեցիկ էր, ինչու՞

դավաճանեցիր» /«Ջավախքի բուրմունք»ժող.նյութեր,գիրք Բ,հավաքեց Ե.Լալայանը, Թիֆլիս, 1892թ.1892թ.էջ57/:

Իրենց բովանդակությամբ սրան մոտ են ու միաժամանակ ինչ-որ չափով տարբեր այլ ժողովուրդների մոտ գրի առված լեգենդի տարբերակները:Հետաքրքիր է հատկապես վրացական ավանդությունը թագավոր Վախթանգ Գորդասլի /5-րդ դար/մասին:Սրա կինը մատնում է նրա անխոցելիության գաղտնիքը մուսուլման թագավորին՝խոստում ստանալով ,որ նա իր հետ կամուսնանա:Բայց երբ այդ ճանապարհով Վախթանգը սպանվում է, օտար թագավորն ասում է դավաճանին.«Դու չկարողացար գնահատել այդպիսի հերոսին և փառաբանված ամուսնուն, ինրպես պիտի ինձ գնահատես»:Նա հրամայում է կնոջը կապել ձիու պոչից.այդպես մաս-մաս եղավ:Վրացական այս լեգենդը գրի է առնվել Կախեթիայում և տպագրվել «Դրոեբա»/«Ժամանակ»/ թերթում 1889թ.:

Թումանյանի արխիվում պահվում է մի պատառիկ.«Աղջիկը սիրահարվում է իր հոր թշնամի զորավարին, բերդի ջրի գաղտնիքը հայտնում է և դառնում բերդի անկման պատճառը»:Ահա դավաճանության մասին այսպիսի ավանդությունները կազմեցին Թումանյանի պոեմի սյուժետային հիմքը:

Սրանից հետո աշակերտներին տալիս եմ հանրագիտարանային տեղեկություններ Թմկաբերդի մասին.«Թմկաբերդ, Թմուկ, Թմոք, Թմոգվի,Թմբուկ- միջնադարյան դղյակ Մեծ Հայքի Գուգարք նահանգի Վերին Ջավախք գավառում,Կուր գետի ձախ ափին:Բերդը գտնվում երեք բարձրադիր բլուրների վրա և ունի մոտ 150մ երկարություն,30մ լայնություն՝ շրջապատված պարիսպներով ու երեք բլրի վրա առանձին կառուցված աշտարակներ:Պարիսպները և աշտարակները շինված են սրբատաշ քարով ու կրով և ունեին 1,5մ հաստություն:Թմկաբերդն ուներ երեք դուռ՝ հարավային,հյուսիսային և արևելյան:Հարավային դռան մոտից ստորգետնյա ճանապարհը ժայռի միջով իջնում էր դեպի Կուր գետը:Բերդը հետագայում ավերվել է»:/Հայկական սովետական հանրագիտարան,հ.4,էջ193,Երևան,1978./

Պարզաբանում եմ նաև,թե ով է եղել ժողովրդական ավանդության անորոշ «պարսից շահը»,որը պոեմում դարձել է Նադիր շահ:Վերջինս թագավորել է 18-րդ դարի 30-40-ական թվականներին, արշավանքներ է կատարել դեպի Իրանի բոլոր հարևան երկրները, այդ թվում նաև Անդրկովկաս:Աչքի է ընկել իր դժանությամբ և նենգությամբ: Սրանից հետո լսում ենք «Թմկաբերդի առումը»պոեմի ընթերցումը Սուրեն Քոչարյանի կատարմամբ:

Հանձնարարում եմ սովորել արտահայտիչ կարդալ և նշեն այն հատվածները, որոնք տան պիտի սովորեն անգիր:

Հաջորդ դասաժամը սկսում եմ կշռադատամն փուլով:Կշռադատման փուլում աշակերտները մտովի հայացք են գցում ու խորհում անցյալ դասի ընթացքում հանդիպած գաղափարների և ընկալած իմաստների շուրջը:Դրանց կիրառական դաշտն ընդլայնելու համար հացադրման մեթոդով եմ աշխատում:Աշակերտները մեկնաբանում են,բանավիճում, հակադրվում միմյանց: Միջին և ցածր կարողությունների տեր 6-ը աշակերների ներգրավվածությունը ապահովելու համար դիմում եմ «Պատասխանում են անվանակոչվածները» ռազմավարությանը:Միջին կարողություններով երկու աշակերտի ուղղում եմ հարցեր, իսկ չորս աշակերտների, որոնք ունեին ցածր առաջադիմություն, նրանց տալիս եմ քարտերի վրա գրված հարցեր,որոնց պատասխանները պետք է փնտրեն պոեմի համապատասխան հատվածներում:

1. «Թմկաբերդի առումը» պոեմի ո՞ր հատվածում է արտահայտված հիմնական գաղափարը և վերաշարադրի՛ր այն:

2. «Թմկաբերդի առումը» պոեմի ո՞ր հատվածում է Շահը գայթակղում Թմկա տիրուհուն և վերաշարադրի՛ր այն:

3.Գտի՛ր այն հատվածը,որտեղ նկարագրվում է քաջ Թաթուլին և վերաշարադրի՛ր այն:

4.Գտի՛ր և վերաշարադրի՛ր այն հատվածը,որտեղ ներկայացվում է Նադիր շահին և Թմկա տիրուհուն:

Մնչև նրանք կգտնեն համապատասխան հարցերի պատասխանները,ես հարցս ուղղում եմ Գեղամին ու Կարենին:

-Ի՞նչի մասին էր պոեմը:

-Ո՞ր հատվածն էր հետաքրքիր:

Եվ այսպես լսում եմ պատասխանները, հետադարձ կապն ապահովում իրենց պատասխաներից բխող հարցերով և որպեսզի միայն ես հարցադրումներ չանեմ, կիրառում եմ նաև **Վեց W-երի ռազմավարությունը:**Բարձր առաջադիմություն ունեցող և ակտիվ աշակերտենրը նույնպես պատասխանում են կշռադատման փուլի հարցերի: Ահա կշռադատման փուլի որոշ հարցերից.

1.-Համեմատե՛ք և վերնագրե՛ք պոեմի նախերգանքը և վերջը՝12-րդ հատվածը:

2.-Հաղթության փառքով ու գինով հարբած

Քընած են բերդի և՛ զորքերն և՛ տեր,

Ու հավիտյան էլ մընացին քնած,

Դավին անտեղյակ, ցավին անտարբեր:

3.-Ասել այն տողեը,ուր բնութագրված էԹաթուլ իշխանը:

4.-Ինչու՞ է Թումանյանը իր ասելիքը հիմնավորում Ֆիրդուսու հայտնած մտքով.էդպես է ասել հընուց էդ մասին Ֆարսի բյուլբյուլը, անմահ Ֆիրդուսին:

5.-Ինչու՞ դառնությամբ լեցուն ծահը չի կարող հանգիստ նայել իի ստոր արարքի մեղսակցին՝ Թմկա տիրուհուն:

6.-Իսկ ինչու՞ էր շահը դառնացած:

7.-Նայում է շահը անտեր գահույքին,

Մտքով անցնում է աշխարհքի բանը...

-Ո՞րն է աշխարհքի բանը, որ անցնում է շահի մտքով:

8.-Նկարագրե՛ք Թմկա տիրուհուն Թումանյանի խոսքերով:

9.-Արդյո՞ք համապատասխանում են իրար Թմկա տիրուհու ներքին և արտաքին գեղեցկությունը:

10.-Ինչու՞ է շահը այսպես արհամարական ու կոպիտ ձևով դիմում Թմկա տիրուհուն.-Պատասխան տուր ինձ,մատնիչ սևաչյա...

11.-Ի՞նչը դրդեց իշխանուհուն դիմելու այդ ստոր արարքին:

12.-Ձեզ հանձնարարված էր գրել նշանավոր մարդկանց ասույթներ փառամոլության մասին: Աշակերտները կարդում են իրենց պատասխանները:

Պատասխան՝

«Ամեն մարդու մեջ ճիշտ այնքան փառամոլություն կա, որքան նրան պակասում է խելքը»: Ա.Պոպ

«Հմարությունն ու փառամոլությունը անբաժան ընկերներ են»: Բոմաշե

Աշակերտներից մեկը վերհիշում է իրենց գրած «Փառասեր եղջերուն» փոխադրության նյութը և այլն...

13.-Ինչու՞ Թմկա տիրուհին անուն չունի:

14.-Արդյո՞ք բանաստեղծը ներում է իր հերոսուհուն:

15.-Դուք արդարացնու՞մ եք, մեղադրում, թե՞ խղճում Թմկա տիրուհուն:

16.-Թմկա տիրուհուն հակադրեք մեր կին հերոսուհիներին:

17.-Ինչու՞ է Նադիր շահը աշուղ ուղարկել Թմկաբերդ, այլ ոչ մեկ ուրիշի:

18.-Աշուղն ի՞նչ ձևով կարողացավ գրավել Թմկա տիրուհուն:

19.- Թմկաբերդի առման դեպքը պատմող աշուղի բերանով ամենայն որոշակիությամբ սահմանվում է մարդու՝ անմահությանը հասնելու միջոցը:Ո՞րն է այդ միջոցը:

20.- Դարձյալ կյանքի անցողիկությունը հիշելով՝ պոեմի վերջում ի՞նչ պատգամներ է տալիս Թումանյանը: Ո՞րն է քո պատգամը:

21.-Ի՞նչ է խորհում մարդու անցողիկ կյանքի մասին Ավ. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքի հերոսը՝ կյանքի փորձությամբ իմաստացած Օհան ամին:

22.-Արդյո՞ք միայն բարի գործն է հիշվում:

Ուսուցիչ.

-Այո՛, չարն էլ կարող է «անմահանալ»՝հերոստրատյան հիշատակ թողնելով իրենից հետո: Բացատրում եմ «Հերոստրատյան փառք» արտահայտությունը, որը գործածվում է եղկելի փառքի իմաստով: Ի լրումն այս ամենի նաև կարդում եմ Ավ. Իսահակայանի «Ով է ապրում» պատմվածքը:

Սրանից հետո հետադարձ կապի միջոցով փորձում եմ պարզել, թե ինչքանո՞վ կարողացա հասնել այն վերջնարդյունքին, որ պլանավորել էի դասի սկզբում, արդյո՞ք կարողացա ձևավորել այն արժեքները ,որոնց մասին քննարկվեց այս դասի ընթացքում: Կատարում եմ ձևավորող գնահատում և հանձնարարում տնային աշխատանք. գրել շարադրություն « Ի՞նչն է կյանքում մնայուն արժեք» վերնագրով:

3.2. Փորձարարական դաս-2

11-րդ դասարանում կազմակերպեցի հաջորդ փորձարարական դասը:Դասի թեման էր Դանիել Վարուժանի «Ձոն» բանաստեղծությունը/ տե՛ս դասապլան -2 էջ՝ 35/:Բոլորիս համար հայտնի ճշմարտություն է,թե ինչքան թանկ է հայրենիքը մեզ՝ հայերիս համար:Եվ

գիտենք , թե ինչ ճանապարհ է անցել իր բազմադարյա պատմության ընթացքում և ինչպիսի փորձությունների միջով է անցել ու անցնում:Սովորողի արժեհամակարգի ձևավորման գործում իր ուրույն տեղն ունի հայրենիքը, հայրենիքի կերպարը, հայրենասիրությունը: Իմ կարծիքով Վարուժանի «Ձոն»-ը հայ գրականության մեջ այն բանաստեղծություններից մեկն է, որով կարող ես առաջնորդվել և դաստիարակել հայրենասեր ,հայրենիքը արժևորող անձեր: Այսպիսի արժեքներ ձևավորելու նպատակով էլ 11-րդ դասարանում ընտրել եմ 6 աշակերտի, որոնք ունեն միջին և ցածր կարողություններ և սկսում եմ դասաժամը դասի ընթացքում օգտագործելով նաև հարցադրումների մեթոդը : Դասաժամն սկսեցի՝կատարելով անդրադարձ նախորդ դասին / «Դանիել Վարուժանի կենսագրությունը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը»/ և տնային աշխատանքի ստուգմամբ:Նախորդ դասին հանձնարարել էի գրել ասույթներ,բանաստեղծություններ նվիրված Դանիել Վարուժանին և «Ձոն» բանաստեղծությանը:

Խթանման փուլում աշակերտները կարդում են բանաստեղծություն,ասույթներ նվիրված Դանիել Վարուժանին և «Ձոն» բանաստեղծությանը:

«Եվ զուլալ, արծաթյա ձայնով երգում էր արևի մասին,

Իր գյուղի՞ արևի մասին, որ մորթել էին ցերեկով...

Երգում էր հերկերի մասին, դաշտերի ու հողի,

Քրտինքըն էր երգում գեղջուկի և նրա վաստակը արդար

Բայց փոխվում էր երգը հանկարծ և դառնում աղաղակ ոխի,

Եվ մոմե շրթեչով քերթողի սկսում էր նա նզովք կարդալ»: Ե.Չարենց

«Վարուժանը հսկայի քայլերով բարձրացավ դեպի կատարելություն՝ դրսևորելով իր բանաստեղծական վիթխարի ուժը, իր գրարվեստի հմայքը, նոր խոսք ասելու, մեր քերթության սահմանները հանճարի հզոր ճախրանքով

ընդլայնելու և բանաստեղծ սերունդների համար ուսուցիչ լինելու մեծ կարողությունը»: Մինաս Հյուսյան

«Իր խորունկ հայրենասիրությամբ, անսահման մարդասիրությամբ, սոցիալական ու քաղաքական բռնությունների դեմ ըմբոստացող ոգով, բնական ու հոգեկան գեղեցկությունների փառաբանությամբ, բանաստեղծական պատկերավոր մտածողությամբ Վարուժանի պոեզիան խոր հետք է թողել հետագա հայ բանաստեղծների վրա և շարունակում է «սրտերի նվաճման»: Վազգեն Գաբրիելյան,գրականագետ

«Ձոնը» մեր հայրենասիրական պոեզիայի գոհարներից մեկը, խտացնում է և՛ հայրենիքի անցյալ ազատ կյանքի պատկերները, և՛ ներկան՝ տառապանգի բոլոր կողմերով, և՛ ընդվզումը՝ պայքարի կոչերով:

«Ձևի և բովանդակության բացառիկ ներդաշնակությամբ, անթերի կառուցվածքով այս բանաստեղծությունը հեղինակի առ հայրենիք ունեցած անսահման սիրո խորունկ դրսևորումն է» : Վազգեն Գաբրիելյան,գրականագետ

«Ձոնը» ծանր վշտի և հայրենական կարոտի, տխուր ապրումների և միաժամանակ հերոսական զգացումների ամբողջություն է: Հր. Թամրազյան

Սրանից հետո կարդում եմ Դ. Վարուժանի աշակերտ Առաքել Պատրիկի հուշերից՝ կապված «Ցեղին սիրտը» ժողովածուի լույս ընծայման հետ. «1909 թվականին՝Սեբաստիայի Ազգային Արամյան վարժարանում դասվանդելու տարին ,Վարուժանը մի օր դասրան է մտնում ուռած պայուսակով և գոհությունից ճառագայթող դեմքով սեղանին դնում իր նոր լույս ընծայված բանաստեղծությունների գիրքը:Կտրատելով գրքի թերթերը՝ նա գուրգուրոտ հայացք է գցում նրանց վրա և աշակերտների համար, որոնք օգտվելով ուսուցչի տրամադրությունից անարգել նրա շուրջն էին խմբվել, սկսում է կարդալ հուզմունքից դողացող իր հնչեղ ձայնով.

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր,

-Քեզի ընծա իմ հայրենիք:

Հեղինակի քերթվածների երկրորդ ժողովածուն «Ցեղին սիրտն» էր այդ, որտեղ զետեղված էր «Ձոն» բանաստեղծությունը»:

Այս հուշը կարդալուց հետո կատարում եմ մի մեջբերում Դ. Վարուժանի նամակներից, որով ունկնդիրները Վարուժանին ամենից առաջ ճանաչում են որպես մեծ հայրենասերի. «Միակ

նպատակս է հայրենիքիս օգտակար դառնալ, ահա գաղափարականը, որ զիս կոգևորե և կկանգնեցե. Արդ միայն իրմով կապրիմ, իրմով եմ հաղթական:1904-1907 շրջանն էր, երբ հայությունը կըխեղդվեր սուրի ու սովի մղձավանջին մեջ, ու ես չուզեցի տեղ տալ իմ անհատական ցավերուս, գրեթե լռեցուցի իմ սիրտս ու նախընտրեցի երգել ցեղին սիրտը,որուն բաբախյունները կզգայի իմ մեջս, իմ սեփական արյունիս խորը:Հայությունը կուլար ու կը մռնչէր իմ մեջս, և երգերս դուրս կուգային օտար երկնքի տակ՝ կարոտի լարովը միայն կապված մեր երկրի հողին ու մարդուն հետ»:/1914թ. Մարտի 20/ Մի այլ տեղ Վարուժանը գրում է.«Ցեղին սիրտը արյուն կուլա մեջս, հրդեհված քաղաքներեն եկած ամեն լուր՝ տաք մոխիրի պես կթափվի գլխիս և սրտիս վրա:Բայց հայը պիտի ապրի...ժողովուրդներու սիրազարդ շղթային մեծ ոսկի օղակն ըլլալու համար»:

Այսքանից հետո անցնում եմ իմաստի ընկալման փուլին:Քանի որ «Ձոնը» քնարական բանաստեղծություն է, նրա առաջին ու ամբողջական ընկալումը չափազանց կարևոր է: Եթե տեքստի անծանոթ բառերը նախապես չբացատրվեն, տեքստը չի ընկալվի ամբողջությամբ:Ուստի նախ անհրաժեշտ է կատարել բառարանային աշխատանք, ապա անցնել տեքստի ընթերցմանը: Բացատրում եմ հետևյալ բառերը.

քուրմ	հեթանոսական կրոնի քահանա
տարաշխարհիկ	օտար աշխարհից եկած,օտարական, պանդուխտ

հեգ	խեղճ, թշվառ,ողորմելի, տառապյալ
կընյուն	կնյունազգիների ընտանիքին պատկանող բազմամյա,ուղիղ և ճկուն ճահճային խոտաբույս,ճիլ, պրտու
հոտել	կտրել,էտել
կարեվեր	ծանր վերքեր ունեցող
անթրոց	կրակախառնիչ
ձոն	ընծայական, ուղերձ
Սոսյաց անտառ	

«Սոսյաց անտառ»-ի բացատրությունը կարդում եմ Հայկ Խաչատրյանի «Սոսյաց անտառ» գրքից՝ համանուն պատմվածքը:Իսկ «կընյուն» բառի համար կարդում եմ Ղուկաս Սիրունյանի «Հայ բույսը» պատմվածքը:Այս պատմվածքների ընթերցումից հետո լսում ենք «Ձոնի» կատարումը բեմի մեծ վարպետ Վարդուհի Վարդերեսյանի կատարմամբ:Այնուհետև դասարանը բաժանում եմ 5 խմբի, յուրաքնչյուր խմբին տալիս բանաստեղծության մեկ տուն և պահանջում վերլուծել տող առ տող՝ իրենց ուժերի ներածին չափով:Իմ ընտրած 5 աշակերտին ներգրավում եմ մեկ խմբում աշխատանքը արդյունավետ դարձնելու նպատակով: Նրանցից կազմված խմբին հանձնարարում եմ կատարել այն ամենը / բառային աշխատանք, բանաստեղծության լսումը/ ինչ մյուս խմբերը:Իս բանաստեղծության վեցնյակի վերլուծությունը կատարում են իմ օգնությամբ:

Այս աշխատանքի համար տալիս եմ 10 րոպե ժամանակ:10 րոպե անց պահանջում եմ դադարեցնել աշխատանքը տեքստի վրա:Լսում եմ 5խմբի վերլուծությունը:

1-ին խումբ

Բանաստեղծության առաջին վեցնյակը ձոներգ է, ներբող փառքերի հայրենիքին: Եղեգնյա գրչով բանաստեղծը երգում է «փառքեր» և ասում. *«Քեզի ընծա՛, իմ հայրենիք»*: «Սոսյաց անտառ» արտահայտությունը ևս տանում է պատմության գիրկը, քանզի դեռևս 5-րդ դարի մատենագիրներից գիտենք, որ սոսին հայոց մեջ համարվել է սուրբ ծառ:: *«Սոսյանց անտառեն էի զայն կըտրեր»* տողն իսկ հուշում է, թե որքան որ սուրբ է սոսին, նույնքան սուրբ է նաև եղեգնյա գրիչը: Չորրորդ տողում վերստին կրկնում է *«Քեզի ընծա՛, հին հայրենիք» տողը*: Երկու դեպքում էլ *«հին հայրենիք»* արտահայտությունը նա առանձնացրել է: 5-րդ տողը մեզ ամբողջովին տանում է հեթանոսական ժամանակները. *«Եղեգնյա գըրչով երգեցի քուրմեր»*: Քուրմը հեթանոսական կրոնի սպասավորն է ու նվիրյալը: Ուրեմն, բանաստեղծը փառաբանում է հեթանոսական ժամանակները: Դրա հաստատումն է եզրափակիչ տողը, որի մեջ ասում է. *«Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ»*:

2-րդ խումբ

Եթե Վարուժանը առաջին տան մեջ լույս էր երգում,ապա երկրորդ տան մեջ ակնհայտորեն ողբերգակ է: Հայոց հայրենիքի ողբերգությունը դեռեւս 10-րդ դարից եղել է պանդխտությունը, ինչն ավելի ուժեղացավ հետագա բոլոր ժամանակներում: Ահա «Ձոնի» երկրորդ տան մեջ Վարուժանը երգում է կարոտ: Չմոռանանք, որ պանդուխտ է եղել Վարուժանի հայրը, ուսման տարիներին պանդուխտ է եղել նաև ինքը և շատ խորքից գիտեր հայրենիքի կարոտի այրող ցավը: Եվ ահա նա երգում է կարոտ և այն ընծայում *«հայ պանդուխտներին»*, *«հեգ պանդուխտներին»*՝ այս անգամ արդեն թավ ու առաձնացող տառերով գրելով այս արտահայտությունները:

«Քուրմեր»-ին այստեղ հաջորդում են «հարսերը». *«Եղեգնյա գրչով երգեցի հարսեր»*, որովհետև պանդխտության է մեկնում տան տղամարդը, իսկ տան կանայք՝ հարսները,

սպասում էին նրանց ու կարոտից հալումաշ լինում: Այս դեպքում արդեն եղեգան փողից ողբ է դուրս գալիս, որովհետև պանդխտությունն ու կարոտը ամբողջությամբ ողբ են:
Եթե առաջին տան մեջ եղեգնյա գրիչը կտրված էր սոսյաց անտառից, ապա պանդխտության ու կարոտի մասին գրելիս այն դառնում է տարաշխարհիկ, այսինքն՝ օտար աշխարհի բույսի ծղոտ:

3-րդ խումբ

Երրորդ տան մեջ բանաստեղծը *«եղեգնյա գրչով»* երգում է արյուն, դա անմեղ հայորդիների արյունն է, որ հոսել-լցվել է պատմության գետերի մեջ: Այս անգամ նա առանձնացնում է *«սուրի զոհեր»*-ին և *«կրակի զոհեր»*-ին, նրա՛նց, ովքեր ընկել են սուր ու կրակից: Եվ բնական է, որ այս ցավը կրողը պիտի ասեր. «*Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ»*:

Այս դեպքում եղեգնյա գրիչը, ըստ նրա, ծլել էր մոխիրի մեջ՝ իբրև կնյուն: Կնյունը ,ինրպես դասի սկզբում տեսանք, ճահճային ամուր խոտաբույս է, որին նաև ճիլ են ասում: Հիմա, ինչպե՞ս կարող է ճահճային խոտաբույսը ծլել մոխիրի մեջ, և ի՞նչ մոխիր է դա: Դա սրի և կրակի զոհերի մոխիրն է կամ աճյունը, որից էլ ահա աճում է ամուր եղեգնյա փողը:
4-րդ խումբ

Չորրորդ տան մեջ ծնողների հիշատակն է եւ լքված հայրական տան պատկերը, որ ավերվող հայրենիքի մի տեսարան է: Այս դեպքում ձոնը հասցեագրվում է հորն ու մորը, եւ առանձնանում ու թավ գրվում են *«հայր ալեհեր»*, *«մայր կարեվեր»* արտահայտությունները: Բանաստեղծը երգում է հայրենի օջախը, իսկ եղեգան փողից ծուխ է ելնում: Ծուխն այս դեպքում օջախի շարունակականության նշանն է:

Այստեղ եղեգնյա գրիչը նա կտրում է «*ցամքած աղբյուրեն մեր»*, այսինքն՝ այդ եղեգան փողը պիտի որ չորոցած լիներ, քանի որ տան առուն ցամաքել էր:
5-րդ խումբը , սա իմ կողմից ընտրված աշակերտերն են, որոնք իմ օգնությամբ էին կատարում բանաստեղծության վերջին վեցնյակի վերլուծությունը:

Միջին կաողությունների տեր աշակեր Ս-ն. ասաց, որ վերջին տան մեջ բանաստեղծը *«պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր»* է երգում՝ որպես ընծա *«հայ մարտիկներին»*, *«քաջ մարտիկներին»*, այդ արտահայտությունները այստեղ առանձնացված են ու գրված թավ:

Խմբում ընդգրկված Ա-ն ասաց, որ բանաստեղծն իր գրիչն այստեղ նմանեցնում է անթրոցի՝ երկաթե երկար ձողի, որով թոնրի կրակն են խառնում: Այստեղ էլ նա իր գրիչով, իր խոսքով հայ քաջ մարտիկների սրտերն է խառնում, որ նրանց մեջ բոցկլտա հայրենիքի ոգին, և նրանք արդար վրեժի ցասումով մարտի նետվեն:
Ցածր կարողությունների տեր աշակերտ Կ-ն ավելացրեց, որ այստեղ արդեն եղեգան փողից բո՛ց է ելնում: Սա հայրենասիրության բոցն է, որ պետք է բոցավառի բոլորի սրտերը և ոտքի հանի նրանց:

Իմաստի ընկալման փուլն այսքանով ավարտում եմ և անցնում եմ կշռադատման փուլին՝հարցադրումների մեթոդով:

Հարց 1-ին.- Ձեր վերլուծություններից եկաք այն համոզման, որ «Ձոնը» հայ հայրենասիրական պոեզիայի գլուխգործոց է: Հայրենիքի նկատմամբ ունեցած իր խորունկ սիրո մասին Վարուժանից առաջ էլ ովքե՞ր են խոստովանքի այդպիսի խոսքեր ասել:
Պատասխան. – Իսահակյան «Երնեկ ունենամ հազար ու մի կյանք» ,Թումանյանը «Հայոց լեռներում», Սիամանթոն «Ափ մը մոխիր,հայրենի տուն», Տերյան «Ինչպես չսիրեմ երկիր իմ կիզված...», Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»:
Հարց 2-րդ.-Ո՞վ է բանաստեղծության քնարական հերոսը:
Պատասխան.-Հայրենիք ունեցող և հայրենիքի պատմական ճակատագրով, նրա բախտով ապրող մարդն է:
Հարց 3-րդ.-Ո՞ր ժամանակահատվածն է ընդգրկված «Ձոնում»:
Պատասխան. -«Ձոն» բանաստեղծությում ժամանակահատվածը բավականին լայն է՝ սկսած հայ ժողովրդի հեթանոսական դարերից մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը:
Հարց 4-րդ.- Բանաստեղծության մեջ կարող եք ցույց տալ անցումները՝ ինչից-ինչ:
Պատասխան. - Անցյալի փառքերից, երանելի ժամանակներից, երբ հայրենիքը ազատ էր, անցում ներկայի կյանք - բռնապետության թաթի տակ հեծծող հայրենիքի,

պանդխտության, սրից և կրակից ընկած զոհերի, հրկիզված երկիր և այս ամենից ծնվող զայրույթ ընդվզում:

Հարց 5-րդ.- «Սոսյաց անտառեն էի զայն կըտրեր...»

«Ան տարաշխարհիկ բույսի մ'էր ծղոտ...»

«Ան ծլածէր մոխրի մեջ իբրև կընյուն...»

«Ցամքած աղբյուրեն մեր զայն հոտեցի...»

«Գրիչս եղավ անթրոց սըրտերուն հնոցի...»

-Այս տողերը մնում են իբրև թերատ, անավարտ խոսք՝ կախման կետերի արտահայտչական ոճավորումով:Ի՞նչ է սա ենթադրում:

Պատասխան.- Այդ երեք կետերը իրենց մեջ ընդհատված մեծ պատմություն են թաքցնում, պատմություն, որի վերածնումն ու շարունակումն թողնվում է ընթերցողի ենթագիտակցությանը:

Հարց 6-րդ,- Բանաստեղծությունից ասեք մեր ժողովրդի ոգբերգական վիճակը նկարագրող բառակապակցություններ:

Պատասխան. – Մեր ժողովրդի ողբերգական վիճակը պատկերված է «հեգ պանդուխտներ»,«սուրի զոհեր», «ցամքած աղբյուր» և այլ պատկերներով:

Հարց 7-րդ. –Ի՞նչ նմանություն կա բանաստեղծության բոլոր վեցնյակների միջև:

Պատասխան. – Առաջին և հինգերորդ տողերի վերևում դրված է միջակետ, երկրորդ և չորրորդ տողերի վերջում անջատված են գծիկով, երրորդ տողի վերջում՝ կախման կետեր, իսկ վեցերորդ տողի վերջում՝ վերջակետ: Բոլոր տների առաջին և հինգերորդ տողերը նույնն են՝ մի բառի փոփոխությամբ /«Եղեգնյա գրչով երգեցի...»/,երկրորդ և չորրորդ տողերը /«Քեզի ընծա...»/ և վեցերորդ տողը /«Ընդ եղեգան փող ...»/:

Հարց 8-րդ.- Ի՞նչ է ընդգծում նույն տողի կրկնությունը:

Պատասխան.- Նույն տողի կրկնությունը ընդգծում է առաջատար տրամադրություն, իսկ տարբերվող բառը դառնում է վեցնյակի բովանդակության նախապատրաստությունն ու սկիզբը:Օրինակ՝ կարոտ բառը բնորոշ է երկրորդ վեցնյակին, քանի որ խոսվում է կարոտի, պանդուխտի և նրան սպասող հարսի մասին:

Հարց 9-րդ.- Բանաստեղծության մեջ դրսևորվում է հեղինակի ոչ միայն հայրենասիրությունը, այլև ժողովրդի ազատության հզոր ձգտումը: Ինչպե՞ս: Վկայակոչե՛ք հմապատասխան տողերը:

Պատասխան - «Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի...»:

Հարց 10-րդ.- Կարելի՞ է բանաստեղծությունը վերջացնել ոչ թե վերջին վեցնյակով, այլ նախորդներից որևէ մեկով:

Պատասխան.- Ո՛չ, չի կարող, քանի որ «Ձոնը» ճարտարապետական մի կոթող է, որի բոլոր մասերը՝ սովորական քարերն ու խոյակները, նախապես հաշվարկված են, պահում են մեկը մյուսին, և ամեն մի քար իր տեղում է:

Հարց 11-րդ. – Բանստեղծի սերն ունի իր հասցեն:Ո՞րն է այդ հասցեն:

Պատասխան.- Այն է՝ հայրենիք, հայր, մայր, օջախ, զոհեր, մարտիկներ...

Որպես ավարտ կշռադատման փուլի՝ հրահանգավորում եմ բոլոր խմբերին ամփոփել բանաստեղծությունը մեկ նախադասությամբ: Ստացել եմ հետևյալ ամփոփումները.

«Ձոնը» վարուժանյան պոռթկուն հայրենասիրության բյուրեղացումն է:

Բանաստեղծական ծավալով ընդամենը հինգ վեցնյակ, իսկ բովանդակությամբ մի աստվածատուր և աստվածապաշտ ժողովրդի պատմություն:

«Ձոնը» ի խորոց սրտից ասված սիրո խոստովանություն է առ հայրենիք:

Բանաստեղծը պատմում է հայրենիքի փառքերի ու տառապանքների, վրեժի ու պայքարի մասին:

«Ձոնը» հիմն է մի ժողովրդի, պատմությունը, վրեժի ու պայքարի երգ:

Վահագնաուժ և Վահագնաբույր մի բանստեղծություն է սա:

Վերջում սովորողներին տալիս եմ մի քանի աբստրակցիոն ոճի նկարներ և պահանջում խմբերից ընտրել մեկ նկար՝ համապատասխան իրենց վերլուծած վեցնյակի և մեկնաբանել, թե ինչու ընտրեցին հենց այդ նկարը: Միջին և ցածր կարողությունների տեր աշակերտների խումբը **Հարցերի շղթայի մեթոդով** կարողացան ներկայացնել, թե ինչու են ընտրել այդ նկարը:

Դասն ավարտում եմ գրականգետ Մինաս Հյուսյանի խոսքերով. «Վարուժանը գրական ասպարեզ իջավ իբրև ըմբոստ քնարավոր, եկավ մրրկաշունչ թափով, Վահագնի

հայացքով թափանցեց իրակնության էության մեջ, իր ազգի և մարդկության տառապանքի խորությունը չափեց և ազատության ու լույսի, գեղեցկության ու հերոսության պատգամներ ավետեց իր դարի մարդկությանը»:

Սրանից հետո հետադարձ կապի միջոցով փորձում եմ պարզել, թե ինչքանո՞վ կարողացա հասնել այն վերջնարդյունքին, որ պլանավորել էի դասի սկզբում, արդյո՞ք կարողացա ձևավորել այն արժեքները ,որոնց մասին քննարկվեց այս դասի ընթացքում: Կատարում եմ ձևավորող գնահատում և հանձնարարում տնային աշխատանք. բանաստեղծությունը սովորել անգիր, ուսումնասիրել ՛՛Ցեղին սիրտը՛՛ժողովածուն:

4.Վերլուծություն

Աշակերտերին դասպրոցեսին ներգրավելու համար անցկացրեցի երկու փորձարարական դաս՝ 8-րդ և 11-րդ դասրաններում:Դասի նպատակը արժեհամակարգի ձևավորումը հարցադրման մեթոդով:Ընդհանուր առմամբ դասերը հաջողված էին, որովհետև այս մեթոդի կիրառությունը թույլ տվեց աշակերտների մեծամասնությանը ներգրավել դասապրոցեսին:

8-րդ դասարանում սովորողները իրենց ակտիվ մասնակցությամբ արժևորեցին այն մնայուն արժեքները, որոնք օգնում են մարդուն մարդ մնալու, դաստիարակում բարություն, հավատարմություն,ընկերասիրություն:Այն աշակերտներն՝ միջին և ցածր առաջադիմություն ունեցող,որոնք գտնվում էին իմ ուշադրության կետրոնում, սկսեցին ավելի վստահ մասնակցություն ցուցաբերել դասին, որովհետև հարցադրումերի մեթոդի կիրառություն հնարավորություն տվեց, անկախ իրենց ցանկության, ներգրավվել դասապրոցեսին: Այդ աշակերտները ,երբ նկատեցին, որ սխալ պատասխանները չեն ծաղրվում ընկերների կողմից և նույնիսկ դրանց մեջ փորձում են փնտրել տրամաբանություն, դա նրանց շատ ոգևորեց:Ճիշտ է, հաճախ ոգևորությունը դառնում էր աղմկարար /ես ասեմ, ես ասեմ.../, բայց նրանց աչքերի փայլը գոհացնող էր, որովհետև ժամերով լուռ նստած աշակերտին հնարավորություն էր տրվել արտահայտել իր սեփական կարծիքը՝ չենթարկվելով քննադատության:

Նմանատիպ պատկեր էր 11-րդ դասարանում, այստեղ տղաները մասնակցում կաշկանդված, որովհետև չէին ցանկանում տալ սխալ պատասխաներ /ամաչում էին դասընկերներից/:Միջին և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները, որոնք իմ ուշադրության կենտրոնում էին, նկատելով իմ և ընկերների ցուցաբերած համբերութունը, պատասխաններին լրջորեն մորենալուն, դասի վերջին հատվածում արդեն փորձում էին ավելի վստահ լինել:Անդրադարձ կատարելու ընթացքում իմ այն հարցին, թե ի՞նչ ձերքբերումներ ունեցան այս դասին,պատասխանը նույնն էր, որ հաջորդ դասաժամին էլ անցկացնենք նմանատիպ դաս: Երկու դասարաններում էլ կարողացա հասնել իմ առջև դրված վերջնարդյունքներին:

Հարցադրումների մեթոդով աշխատելը աշակերտների համար ավելի հետաքրքիր էր. նրանք պասիվ լսելու փոխարեն ակտիվ ներգրավված էին, բացի դրանից հարցադրումների ոճը միտված էր խթանելու աշակերտների հետաքրքրությունը: Հարցադրումների մեթոդով դասի ընթացքում շեշտը դրվում է հասկանալու, ոչ թե պարզապես իմանալու վրա: Պատմելու վրա հիմնված դասի ընթացքում աշակերտներին պարզապես ասվում էր այն, ինչը նրանք պետք է իմանան. նրանց չի դրդում հասկանալ, և քիչ հավանական է, որ նրանք մտապահեն ասվածը: Հարցադրումների արդյունքում աշակերտներն իրենց ենթադրություններն ու նախկինում ստացած գիտելիքը հարցականի տակ են դնում և շտկում: Անհատական հարցադրումների միջոցով կարաողացա բացահայտել այն դժվարությունը, որին հանդիպել է աշակերտը: Հարցադրումների մեթոդը թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառությունը, խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը, մոտիվացնում է աշակերտներին և այն դարձնում աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց: Հարցադրումների մեթոդը շատ կարևոր է, ճիշտ կիրառումը ոգևորում է դասարանի բոլոր աշակերտներին և նրանց մղում մտածելու, հնարավորություն է տալիս աշակերտներին ստանալու դրական հետադարձ կապ՝ ցույց տալով ուսումնառության մեջ նրանց հաջողությունները, հարկավոր է մտածելու ժամանակ տալ, խրախուսել պատասխանները, սկզբում պարզ հարցեր տալ: Ծաղրելու փոխարեն՝ տրամաբանական մտածողության միջոցով ուսուցիչը պետք է հանգեցնի ճիշտ պատասխանին: Ժամանակի

ընթացքում աշակերտը ոչ թե դասագրքից կգտնի հարցերի պատասխանը, այլ կսկսի մտածել և տրամաբանված պատասխաններ կտա, այդ ժամանակ կհասկանաս, որ նպատակիդ հասել ես: Հարցադրումների մեթոդը միաժամանակ կարելի է օգտագործել և սովորողների վերլուծական մտածողությունը զարգացնելու, և պարզապես նրանց դասապրոցեսի մեջ ներգրավելու նպատակով: Եթե համեմատաբար պասիվ կամ պարզապես քչախոս աշակերտներին հաճախ դիմես փակ հարցերով, ոգևորես, ապա նրանք անպայման կներգրավվեն:

՛՛ Հարցադրումների մեթոդով աշխատելիս ողջ դասարանը ընդգրկված է լինում դասին, մեծ ակտիվություն է նկատվում, աշակերտներն ավելի զգոն և ուշադիր են դառնում, իսկապես աշակերտը մոտիվացվում է, հետադարձ կապ է ապահովվում: Ես շատ եմ կարևորում այս մեթոդը, որը օգնում է որ աշակերտը մտածի, վերլուծի, կարողանա իր հասկացածը կիրառել նոր իրավիճակում, եզրահանգում կատարի, իսկ ուսուցիչը կարողանա հետադարձ կապ ապահովել, թյուրըմբռնումները շտկել: Կարևորվում եմ հարցերի՝ պարզից դեպի բարդ բոլոր տեսակները, որոնցից յուրաքանչյուրն էլ կարևոր է, և փաստերն են կարևոր և այնպիսի հարցերն, որոնք տանում են բարձր մտավոր հմտությունների զարգացմանը:՛՛/Ռ.Խ./

5.Գրականության ցանկ

- Իննա Փերեմուզյան – Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթակն ուսումնական հաստատությունում
- Ասյա Ղուկասյան – Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը

- Ջեֆ Փեթթի - «Դասավանդումն այսօր», Գլուխ 14, Հարցադրումների մեթոդի առավելությունները» հետազոտական աշխատանք
- https://lib.armedu.am/ Բաբերցյան Լարիսա - Հարցադրման մեթոդ
- https://www.youtube.com/watch?v=TDUCYdeDplk Ռուզաննա Խաչատրյան - Հարցադրումների ազդեցությունը
- Ա.Ի. Սոլժենիցինը- Նոբելյան դասախոսությանը

6.Հավելված

Դասապլան-1

Առարկան՝ Գրականություն, 8-րդ դաս.

Կազմող ուսուցիչ՝ Դ. Չոմոյան

Առարկան՝	Գրականություն	Ամսաթիվ՝		Կիսամյակ		Դասարան	8-րդ
Խմբի բացվածքը՝							
Թեման՝	Հովհաննես Թումանյան «Թմկաբերդի առումը» պոեմը						
Օգտագործվող գրականություն՝	8-րդ դասարանի դասագիրքը, թուղթ,մարկերներ,նկարներ, տեսանյութեր, բաշխման նյութեր,՛ Սուրեն Քոչարյանի կատարմամբ պոեմի ընթերցումը						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները նախորդ դասից ծանոթացել էին Թումանյանի կենսագրությանը,ծանոթացել էին նրա գործունեությանը թե՛ մարդ-քաղաքացի, թե՛ բանաստեղծի:Պատկերացում ունեին պատմական ժամանակահատվածի և ողբերգական դեպքերին և Թումանյանի դերը այդ ընթացքում: Այս ամենը կօգնի նրանց լավ հասկանալու «Թմկաբերդի առումը» պոմի արտահայտած գաղափարը:						
Դասի նպատակը՝	-նպաստել ընթերցածի վերաբերյալ կարծիք արտահայտելու և հիմնավորելու կարողության զարգացմանը -զարգացնել բանավոր խոսքը -վերլուծել պոեմի բովանդակությունը - ներկայացնել հերոսականության, մարդկային առաքինության, մարդու անցողիկ կյանքի արժևորումը և վեհ գործերի անմահության գաղափարի դրվատումը						

	-արժևորել Թումանյանի պատգամը
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն,որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքներ՝	-արտահայտել կարծիք կերպարների գործողությունների վերաբերյալ -բնութագրել հերոսներին, վեր հանել նրանց արարքների դրդապատճառները -արտահայտել մտքեր գրագետ բառապաշարով -բացահայտել պոեմի հիմքում ընկած գաղափարը -ներկայացնել գրողի ասելիքի իմաստն ու վերաբերմունքը - արժևորել կյանքի անցողիկությունն և վեհ գործերի անմահության գաղափարը

Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ		Նպատակներին հասնելու ռազմավարություն	
Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում:		Նախատեսում եմ հարցադրումներով արձանագրել յուրաքանչյուր սովորողի դինամիկան	
Գործողություններ /ժամ,	Ուսումնական գործունեություն	Պլանավորած տարբերակում և ՈՒԳ	Առանցքային հարցեր

տևողություն/ 2 դասժամ	Աշակերտ	ռազմավարություն	Հիմնական ստուգումներ /հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին/
Մուտք,ներկա-բացակա/3ր/ Անդրադարձ հին դասին /5-7ր Փոքրիկ շարադրություն /5ր/	Աշակերտները վերհիշում են անցած դասը, պատասխանում հարցերին Աշակերտները լսում են, ներկայացնում են ասույթներ, գրի են առնում իրենց տետրերի մեջ Յուրաքանչյուրը աշխատում է իր ընտրած վերնագրի վրա: Խմբերը հերթով	Անդրադարձ նախորդ դասին Ամփոփել, կապ հաստատել նոր դասի հետ Կարդալ ասույթներ՝ նվիրված Հովհ. Թումանյանին Այնուհետև հանձնարարում եմ գրել շարադրություն հետևյալ թեմաներով 1.Ու՞մ եմ համարում	Ի՞նչ է պոեմը, տեսակները, ժանրային առանձնահատկությունները : Գրել փոքրիկ շարադրություն տրված թեմաներից մեկով կամ վերհիշել առածներ, ասույթներ այդ թեմաների վերաբերյալ: Ու՞մ եմ համարում կամ ո՞վ է համարվում լավ մարդ: Ու՞մ եմ հիշում կամ ո՞վ է հիշվում տհաճությամբ և

Հիշեն առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր լավ և վատ գործի	ներկայացնում են իրենց գրած շարադրությունները: Աշակերտները ասում են առած-ասացվածքներ լավ և վատ գործի մասին: Աշակերտները	կամ ո՞վ է համարվում լավ մարդ և ինչու՞ 2.Ու՞մ եմ հիշում կամ ո՞վ է հիշվում տհաճությամբ և ինչու՞ 3.Ու՞մ եմ հիշում երախտագիտությամբ կամ ո՞վ է հիշվում տարիների ու դարերի ընթացքում: 4.Ումի՞ց եմ օրինակ վերցնում և ինչու՞ 5.Ու՞մ կուզենայի նմանվել և ինչու՞ Շարադրությունները ներկայացնելուց հետո հանձնարարում եմ հիշեն առած-ասացվածքներ լավ և վատ գործի մասին: Ես էլ կարդում եմ բանաստեղծություն	ինչու՞: Ումի՞ց եմ օրինակ վերցնում և ինչու՞: Ու՞մ կուզենայի նմանվել և ինչու՞:

մասին/2ր/ Պոեմի ընթերցում Առաջին դասի ավարտը, տնային հանձնարարություն /2ր/ 2-րդ դասաժամ	պատասխանում են հարցերին: Աշակերտները նշում են տնային հանձնարարությունը: Աշակերտները անգիր հատվածներ են ներկայացնում պոեմից,պատասխանում են հարցերին:	ու պատմվածքը գործին նվիրված: Ներկայացնում եմ տեղեկություններ Թմուկ բերդի մասին: Այնուհետև լսում ենք «Թմկաբերդի առումը» պոեմը Սուրեն Քոչարյանի կատարմամբ: Հանձնարարում եմ սովորել արտահայտիչ կարդալ և նշեն այն հատվածները, որոնք տան պիտի սովորեն անգիր: Հաջորդ դասաժամը սկսում եմ անդրադարձ նախորդ դասին,հետո անցնում եմ կշռադատման փուլին՝օգտագործ	Ինչի՞ մասին կլինի մեր նոր դասը: Ի՞նչ է պոեմը: Որտե՞ղ է գտնվում Թմուկ բերդը: 1. «Թմկաբերդի առումը» պոեմի ո՞ր հատվածում է արտահայտված հիմնական գաղափարը և վերաշարադրի՛ր այն: 14.-Արդյո՞ք բանաստեղծը ներում է իր հերոսուհուն: 15.-Դուք արդարացնու՞մ եք, մեղադրում, թե՞ խղճում Թմկա տիրուհուն

	Վեր են հանում հացադրման մեջ ներառված խնդիրները: Խմբերը հերթով ներկայացնում են իրենց ամփոփումները:	ելով հարցադրումների մեթոդը: Կատարում եմ անդրադարձ Վերլուծում եմ իմ դասի նպատակները և վերջնարդյունքները ,ներկայացնում իմ ձեռքբերումները,նշում նաև թերըմբռնումները՝հաջորդ դասին անդրադառնալու նպատակով: Կատարում եմ ձևավորող գնահատում :	և այլ հարցեր: ○ Չափանիշներ՝ ● տրամաբանված խոսքի կառուցում ● գրագետ շարադրանք ● ներկայացնել հերոսականության, մարդկային առաքինության, մարդու անցողիկ կյանքի արժևորումը և վեհ գործերի անմահության գաղափարի դրվատումը ● արժևորել Թումանյանի պատգամը

Տնային աշխատանք	Տնային առաջադրանքի հանձնարարում: Գրել շարադրություն « Ի՞նչն է կյանքում մնայուն արժեք » վերնագրով:		

Դասապլան-2

Առարկան՝Հայ գրականություն, 11-րդ դաս.

Կազմող ուսուցիչ՝ Դեղձանիկ Չոմոյան

Առարկա՝	Հայ գրականություն՝	Ամսաթիվ՝		Կիսամյակ՝	1-ին	Դասարան՝	11-րդ
Խմբի բացվածքը՝							
Թեման՝	Դանիել Վարուժան «Ձոն»						

Օգտագործվող նյութեր՝	11-րդ դասարանի դասագիրքը, թողթ,մարկերներ,նկարներ, տեսանյութեր, բաշխման նյութեր
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները նախորդ դասից ծանոթացել էին Վարուժանի կենսագրությանը,ծանոթացել էին նրա ողբերգական մահվան մանրամասներին,պատկերացում ունեին պատմական ժամանակահատվածի և ողբերգական դեպքերին:Այս ամենը կօգնի նրանց լավ հասկանալու «Ձոն» բանաստեղծությունը:
Դասի նպատակը՝	-կարողանա տեսնել քնարական բանաստեղծության մեջ համադրված դրամատիկական, հերոսական ու վիպական տարրերը -զգալ նրա արտակարգ կանոնավոր ,ռիթմիկ կառուցվածքը -զգալ ներքին երաժշտակնությունը և հանգավորումը -բնութագրել նրանում արծարծված խնդիրների զարգացումը -հասկանալ բանաստեղծության բովանդակության և ձևի ներքին կապը,նրանց ներդաշնակությունը
Ուսուցման արդյունքներ,որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքներ՝	-ներկայացնի քնարական բանաստեղծության մեջ համադրված դրամատիկական, հերոսական ու վիպական տարրերը -ցուցադրել բանաստեղծության ռիթմիկ ու կանոնավոր կառուվածքը -բացահայտել բանաստեղծության մեջ արծարծված խնդիրները -արժևորել հայրենիքը և հայրենասիրությունը

Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	Նպատակներին հասնելու ռազմավարությունը
Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում	Նախատեսում եմ խճանկար մեթոդի միջոցով արձնագրել յուրաքանչյուր սովորողի դինամիկան

Գործողություններ (ժամ,տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություն Ուսուցիչ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
Դաի տևողությունը 2ժամ Մուտք, ներկա-բացակա (3ր)	Աշակերտները վերհիշում են անցած դասը, պատասխանում հարցերին Աշակերտները	Անդրադարձ հին դասին Ամփոփել, կապ հաստատել նոր դասի հետ Կարդալ բանաստեղծությունը, ասույթներ՝ նվիրված	

Անդրադարձ հին դասին (10ր) Դասի ընթացքը ` Իմաստի ընկալման փուլ	լսում են, ներկայացնում են ասույթներ, գրի են առնում իրենց տետրերի մեջ Յուրաքանչյուր	Դ.Վարուժանին և «Ձոն» բանաստեղծությանը Այսքանից հետո անցնում եմ իմաստի ընկալման փուլին Բացատրել անծանոթ բառերը ,բառակապակցությունները(Սոսյաց անտառ) Հայկ Խաչատրյանի «Սոսյաց անտառ» գրքից «Սոսյաց անտառ» պատմվածքը «կընյուն» բառի հետ կարդում եմ Ղուկաս Սիրունյանի «Հայ բույսը» Այսքանից հետո լսում ենք «Ձոն»-ը բեմի մեծ վարպետ Վարդուհի Վարդեսյանի կատարմամբ «Ձոնը» լսելուց հետո դասրանը բաժանում եմ 5խմբի, յուրաքանչյուր	

Կշռադատման փուլ	Խումբ աշխատում է բանաստեղծության իր հատվածի վրա Խմբերը հերթով ներկայացնում են իրենց վերլուծությունները: Աշակերտները հերթով պատասխանում են հարցերին: Վեր են հանում հացադրման մեջ ներառված խնդիրները: Խմբերը հերթով ներկայացնում են իրենց	Խմբին տալիս բանաստեղծության մեկ տուն և պահանջում վերլուծել տող առ տող՝ իրենց ուժերի չափով:(10ր) 10 րոպե անց պահանջում եմ դադարեցնել աշխատանքը: Լսում եմ 5 խմբի վերլուծությունները: Կշռադատման փուլը կիրականացնեմ հարց ու պատասխանի միջոցով: 1.Հայրենիքի նկատմամբ ունեցած իր խորունկ սիրո մասին Վարուժանից առաջ էլ ովքե՞ր են խոստովանանքի այդպիսի խոսքեր ասել: 2.Ո՞վ է բանաստեղծության քնարական հերոսը: 3.Ո՞ր ժամանակահատվածն է	Ովքե՞ր են իրենց ստեղծագործություններում երգել հայրենասիրություն: Ո՞վ է բանաստեղծության քնարական հերոսը: Ո՞ր ժամանակահատվածն է ընդգրկված «Զոնում» : 4.Բանաստեղծության մեջ ցույց տալ անցումները՝ ինչից-ինչ: Ի՞նչ ձայներ էիք լսում բանաստեղծությունը կարդալու ընթացքում: Ի՞նչ երաժշտության ներքո կուզենայիք ասմունքել ստեղծագործությունը:

	ամփոփումները: Աշակերտները ընտրում են նկարները և մեկնաբանում են :	ընդգրկված «Զոնում» : 4.Բանաստեղծության մեջ ցույց տալ անցումները՝ ինչից-ինչ: 5.Բանաստեղծությունից ասեք մեր ժողովրդի ողբերգական վիճակը նկարագրող բառակապակցություններ ..... և այլն Ամփոփել բանաստեղծությունը մեկ նախադասությամբ: Խմբերին տալիս եմ աբստրակցիոն նկարներ ունպահանջում ընտրել մեկ նկար՝ համապատասխան իրենց վերլուծած վեցնյակի և մեկնաբանել, թե ինչու ընտրեցին այդ նկարը: Դասն ավարտում եմ Մինաս Հյուսյանի խոսքերով: Կատարում եմ	Չափանիշներ՝ ● տրամաբանված խոսքի կառուցում ● գրագետ շարադրանք ● արժևորել հայրենիքը և հայրենասիրությունը

Տնային աշխատանք		անդրադարձ Վերլուծում եմ իմ դասի նպատակները և վերջնարդյունքները ,ներկայացնում իմ ձեռքբերումները,նշում նաև թերըմբռնումները՝հաջորդ դասին անդրադառնալու նպատակով: Հանձնարարում տնային աշխատանք: Բանաստեղծությունը սովորել անգիր:	